

Խ. Հ. ՄԵԼԻՔ-ՓԱՐՍԱԴԱՅԱՅԱՆ

ՀԱՄԱՐԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԶ ՀԱՍԱԾ
ՀԱՅ ԱՄԵՆԱՀԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Միջնադարյան հայ բժշկական գրականության մեջ հաճախ հանդիպում է մի աշխատություն վերտառությամբ՝ «Բառք Գաղղիանոսի բժշկապետի», Վերջինս մի բառարան է, որի առաջին սյունակում հայերեն գրերով և այրբենական կարգով դասավորված են օտար բառեր, իսկ երկրորդ սյունակում՝ դրանց հայերեն բացատրությունը: Ամեն մի օտար բառի բացատրությունն ընդհանրապես մի բառով է տված, սակայ զեղքերում մի քանի: «Բառք Գաղղիանոսի» մեջ այրբենական կարգը լավ չի պահպանված: Բառերի այրբենական անփույթ դասավորությունը նրա մեջ նկատվում է սկզբից մինչև վերջը:

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանում «Բառք Գաղղիանոսի» ձեռագրերի թիվը հասնում է 32-ի: Մոտավորապես այդքան էլ կա Հայաստանի սահմաններից դուրս եղած գրչագիր հաշվագածուների մեջ: Գրչագիր օրինակների մեծ մասի մեջ «Բառք Գաղղիանոսի» բառարանը լրել է, այլ հասնում է մինչև «Ս» տառը: Այս տիպի գրչագրերը պարունակում են մոտ 400 բառ:

Լիակատար օրինակներից է Պետ. Մատենադարանի № 7117 ձեռագիրը, որի մեջ բառաշարքը հասնում է մինչև «Թ» տառը և պարունակում է 538 բառ: Վերջինս 15-րդ դարի գործ է և գրված է թովմա Մեծոփեցու ձեռքով: 15-րդ դարից մեզ հասել է նաև մի այլ ձեռագիր (Պետ. Մատ. № 266), որի զրիչն է Ամիրգովլաթը: Սրա մեջ թեև բառերը հասցված են մինչև «Թ» տառը, բայց բառաքանակը երեսուն բառով պակաս է թովմա Մեծոփեցու բառարանից: «Բառք Գաղղիանոսի» հայտնի գրչագրերի մեջ ամենից լրիվը թովմա Մեծոփեցու ընդօրինակածն է: «Բառք»-ի մեջ նկատվում են կրկնողություններ: Միենույն

բառը գրված է մի քանի անգամ և նրան տարբեր բացատրություններ տված:

Զեռագիր օրինակների մեծ մասի մեջ բառարանը սկսվում է «Արխար» բառով, քչերը՝ ակրիպրեա-ով: Այս բառով է սկսվում նաև Թովմա Մեծոփեցու «Բառք»ը:

«Բառք Դաղիանոսի» մեջ շուրջ 400 բառ հունարեն է: Այդ բառերը հայերեն տառադարձությամբ գրելով՝ ենթարկվել են որոշ աղավաղությունների, ապա դարերի ընթացքում, զանազան դրիչների կողմից կատարած սխալ արտազրություններն ավելի ևս բարդացրել են աղճատությունները: Այնուամենայնիվ, չնայած այդ բոլորին՝ բառերի մեծ մասը պահպանել է հունարենի հատուկ հնչյունաբանությունը: Ապա գալիս են այն բառերը, որոնք այնքան են աղավաղված, որ նրանց ստուգաբանությունը մեծ աշխատանք է պահանջում: Այդ բառերի թիվը հասնում է 80-ի: Մրանց հետեւում են 80-ի չափ արարերեն բառեր:

Ինչպես արդեն հիշեցինք, բառերի բացատրությունը սովորաբար տված է հայերեն: 30 բառ բացատրված է արարերեն, իսկ մի քանիսը հունարեն:

Բառերի մեծ մասը բույսերի անուններ են: Մոտ 100 բառ անատոմիական, ախտաբանական, կենդանաբանական և դեղագիտական տերմիններ են:

Մեր ձեռքի տակ եղած գրչագիր օրինակները (թվով 31) վերաբերում են զանազան ժամանակների: Դրանցից՝

3 ձեռագիր պատկանում են 14-րդ դարին

4	»	»	15-րդ	»
5	»	»	16-րդ	»
15	»	»	17-րդ	»
4	»	»	18-րդ	»

Չնայած ուշ ընդօրինակություններին, «Բառք Դաղիանոսի»-ն ավելի հին ժամանակների գործ է: Որհնք են մեր ենթադրության կովանները: Նախ, այդ գրական-գիտական հուշարձանի մեջ չկան օ և ֆ տառերով սկսվող բառեր: Այս գրերը հայերի մեջ գործ են ածվում 12-րդ դարից, հետեւպես «Բառք Գաղիանոսի»-ն պիտի գրված լիներ այդ դարից ավելի վաղ: Երկրորդ, «Բառք Դաղիանոսի» մեջ հունարեն ուշ գիրը մեծ մասամբ արտաբերված ու տառադարձված է «Ղ» գրով, օրինակ՝ լազու-դազոս, լոտոս-դոտոս, լեվկե-դեւկե, մեսպելոն-մեսպե: Պահ և այլն: Նման տառադարձությունը սովորական էր մեր

գրականության մեջ մինչև 9—10-րդ դարերը: Երբորդ, «Բառք Գաղփանոսի» մեջ կան 10 հունարեն բառեր, որոնք սկսվում են «» (վյունով) և համապատասխանում է հունական շաբաթական (իպսի-լոն) տարին: Դրանք են՝

Մասագարձություն	Հունարեն
Իդորայ—(ազգ ջրգող)	—Իծրա
Իորոպոպեր—(պսպղակ)	—Յօրոπոպερ
Իուկիամոն—բանկ)	—Յօսκυաμος;
Իմենայ—(միզն)	—Իμεγ
Իպերոն—(ձեղուն բերանոյ)	—Իպερε
Իփեմոն—(արյուն ուժգին)	—Իպερα:μω?
Իպոքոնդրիայ (խոնդանայ)	—Իպօχονδρια
Իպոստասի—(մածումն)	—Իպօստասις
Իպոմիկիտոն—(խեղգել կիճճոյ)	—Իպօսուտօս

Հայերի մեջ սովորություն չկար «» (վյունով) սկսվող քառեր գրել նման բացառություններ անում էին միջնադարյան բանաստեղծները, այն էլ բացառիկ գեղքերում, երբ ցանկանում էին անվանական կամ այբբենական ակրոստիկական տառերի մեջ բոլոր հնչյուններն արտաքիրած լինել: Այդպես է արել օրինակ, ներսես Շնորհալին իր «Առաւոտն լուսոյց տաղի մեջ: Նա երեք անգամ գրել է ւիւծեալ, փոխանակ եիւծեալ գրելու և այլն:

Սակայն պետք է նկատի առնել, որ «Բառք Գաղփանոսին» չափածո գործ չէ և որ նրա հեղինակը մտադիր չի եղել իր բառարանի մեջ տալ բոլոր գրերով սկսվող բառեր (այդ երեսում է նրանից, որ նրա մեջ բացակայում են է, ծ, ջ և զ գրերով սկսվող բառեր): Հետեապես, մնում է միայն ենթադրել որ հեղինակը հունարեն բառերը հայերեն տառերով գրելիս, կամ եցել է հունարեն շաբաթական (իպսիլոն) հնչյունը հայերեն համապատասխան հնչյունով արտաքիրել: Դա կատարված պիտի լինի այն ժամանակ, երբ հայերի և հույների մեջ կուլտուրական փոխարարեցություններն ավելի աշխույժ էին, քան ուշ միջնադարում: Հօգուտ մեր կարծիքի է խոսում նաև հետեւյալ փաստը: Վենետիկի Միսիթարյանների մատենադարանում № 1281-ի տակ կամի ձեռագիր,¹ որի մասին չ. Պ. Ալիշանը՝ Սիսուաթի մեջ որոշ

¹ չ. Պ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 337:

տեղեկություններ է տալիս: Վ. Թորգոմյանը հաստատում է Հ. Ալիշանի տված տեղեկությունները:¹ Այդ ձեռագիրը գրված է 1294 թվին, մի ոմն ծերունի Վարդ Մրտիցիի ձեռքով «Ի կատարութիւն Հեթում թագավորի հրամանի»: Դա մի բժշկարան է, որ ընդօրինակված է մի ավելի հին ձեռագրից: Ըստ Ա. Սուքրյանի² Բժշկարանը պետք է գրված լիներ Գագիկ Ա.-ի օրոք, որը իշխել է 990—1020 թ.թ.:

Այդ բժշկարանը, որ սովորաբար «Գագիկ Հեթումյան» բժշկարանի անունն է կրում, ունի լեզուիս վերջին գլուխը մի բառարան է և ոչ այլ ինչ է: բայց եթե ոչ «Բառք Գաղիանուի», որ հասնում է մինչև «Ս» տառը: Նա նման է Հայաստանի Պետ: Մատենադարանում պահպանվող «Բառք Գաղիանուի» գլուխագիր օրինակներից շատերին:

«Գագիկ Հեթումյան» բժշկարանի մեջ զետեղված այդ բառարանը մեզ հասած ամենահին «Բառք Գաղիանուի» ընդօրինակությունն է:

Հ. Ալիշանը «Բառք Գաղիանուի»-ն համարում է մեզ հասած ամենահին բուսական բառարանը, ենելով այն հանգամանքից, որ նրա մեջ տեղ են գտել բավականաշափ բուսական բառեր: Սակայն, եթե նկատի ունենանք նրա մեջ առկա բազմաթիվ «ախտաբանական, անատոմիական, կենդանաբանական և դեղագրական բառերը, ապա մենք լիսպես իրավունք ունենք «Բառք Գաղիանուի»-ն համարելու մեզ հասած ամենահին բժշկական բառարանը:

Այն փաստը, որ ամենահին «Բառք Գաղիանուի»-ն կազմում է «Գագիկ Հեթումյան» բժշկարանի լեզուիս, առիթ է տվել Վ. Թորգոմյանին կարծելու, որ զարդարությունը տական բառական բառարան է:

Այդ կարծիքն անընդունելի է: Ճիշտ է, մենք չունենք ձեռքի տակ «Գագիկ Հեթումյան» Բժշկարանի պատճեն, բայց Վ. Թորգոմյանի տված գրչագրի բովանդակության նկարագրությունից պարզվում է, որ այդ բժշկարանի մեջ կան մեծ քանակությամբ արարական բառեր, որոնք չեն հանդիպում «Բառք»-ի մեջ, օրինակ՝ կարուրա, պուհրան, մապուխ, հապ, հալիլայ, պլղամ սաֆ-

¹ Վ. Թորգոմյան, «Բաղմավեպ», Վենետիկ, 1923, հունվար, էջ 7:

² Ա. Սուքրյան, «Բաղմավեպ», Վենետիկ, 1881, Պատմություն հայ բժշկության, էջ 3:

բայ, սավգայ և այլն: Ընդհակառակն «Բառք»-ի մեջ կան շատ հունարեն բառեր, որոնք չեն հանդիպում Բժշկաբանի մեջ, բացի այդ՝ «Բառքի» մեջ կան մի շաբթ կենդանիների անուններ, որոնց մասին Բժշկաբանում ակնարկ անգամ չկա, օրինակ՝ անգղ, արջ, աղուես, գոմեզ, աքիս, ագուավ և այլն: Հետեւապես «Բառք» Դաշտիանութեն մի բառարան է, որ զրված է այլ նպատակի համար. բայց կը վել է այդ բժշկաբանին:

Այնուամենայնիվ, այն հանգամանքը, որ «Գագիկ» Հեթումյան Բժշկաբանը հազեցված արարական տերմիններով և «Բառք» Գաղիանոսիք-ն հունական տերմիններով, միաժամանակ գոյություն են ունեցել մեր զրականության մեջ 10—11-րդ դարի սկզբին, մեզ բավականաչափ նյութ է տալիս որոշ գաղափար կազմելու այդ զարաշրջանի հայերի մեջ գոյություն ունեցող բժշկականության, մասնավորապես բժշկագիտական-բնադիտական տերմինաբանության մասին:

Այն հանգամանքը, որ «Բառք»-ի օտար բառերի բացատրությունը տված է զվարապես հայ բառերով, ապացուցում է, որ այդ ժամանակ հայերի բժշկական զրականության մեջ հայ բառ-տերմինների կողքին առկա էին օտար բառ-տերմիններ և որ հայ տերմինները ավելի մատչելի էին հայ հասարակության: Որ 10-րդ դարի վերջում և 11-րդ դարի սկզբում իրոք հայերի մեջ մոռաք էին զործել արաբական բառ-տերմիններ, հաստատվել է նաև «Գագիկ» Հեթումյան Բժշկաբանը, որ զրված է եղել այդ ժամանակամիջոցում:

Սակայն հայերը միայն 10-րդ դարում չեն, որ ունեին հարուստ բժշկական և բնադիտական բառապաշտար: Դեռևս 5-րդ դարում հայերի բառապաշտարը այդ բնադավաներում այնքան հարուստ է եղել, որ Ս. Գիրքը և Յարոնդ Կեսարացու աշխատությանները թարգմանելիս՝ հայերը գործ են ածել զվարապես հայ տերմիններ և միայն սակալ զեպքերում զիմել են հունական կամ օտար տերմինների: Այդ դրությունը շարունակվում է նաև հետագայում: Հայերը զերազասում էին զործ ածել աղգային բառեր, հարկավ, բացարձակապես չանտեսելով հունական տերմինները, «Բառք» Գաղիանոսին՝ դրա լավագույն իլուսաբացիան է:

Հունական բժշկական և բնագիտական տերմինները լայն ժողովրդական մասսաներին ծանոթ չեին. դրանք մատչելի էին զվարապես այն հայ բժիշկներին, որոնք կենդանի կապ էին

պահպանում Հայաստանից դուրս եղած հույն բժիշկների հետ,
Հայ և հույն բժիշկների փոխաղաք զիտական և կուլտուրական
կապը հաստատվել է մոտավորապես մինչև արարական արշա-
վանքները, Այդ միջավայրում կենցաղավարել են նաև բժշկա-
կան և բնագիտական հույն տերմինները: Արորական արշավանք-
ների, ինչպես և Մերձավոր Արևելքի մեծ մասը արարների կող-
մից նվաճելուց հետո՝ հայերի կապը հույն աշխարհի հետ զգա-
լապես թուլանում է, մանավանդ եթե նկատի ունենանք այն,
որ 7-րդ դարից հետո հունական բժշկության համար սկսվում է
անկման մի ժամանակաշրջան: Նշածս իրադարձությունների և
սրանց պատճառով առաջացած փոփոխությունների հետեւնքով
հունական տերմինները դառնում են սակավ գործածական և
10-րդ դարի վերջերում նրանք այլևս շատերի համար անհաս-
կանալի էին: Այդ դրությունը տեսնելով հայ հեղինակներից մեկը,
Թերեւ մի զիտուն բժիշկ, հավաքել է այդ օտար բառերը և կազ-
մել նրանց բացատրությունը: Հույն տերմինները այն աստի-
ճան էին մոռացության մատնված, որ անդամ ինքը՝ բառարանի
հեղինակը, մի շարք բառ-տերմիններ սխալ է բացատրել: Դեռևս
9-րդ դարում արարներն սկսում են մի առանձին եռանդով հե-
տաքրքրվել հունական բժշկությամբ և արարերեն թարգմանել
հունական բժշկական աշխատություններ: 10-րդ դարում արար-
ների մոտ բժշկությունն այնքան է զարգանում, որ արարական
բժշկական տերմինները տարածվում են հարեւան ժողովուրդների
մեջ: Գագիկ Հեթումյան թժշկարանը և Բառք Գաղիանոսին վկա-
յում են այն մասին, որ 11-րդ դարի սկզբներին արարական
տերմիններն այնպիսի խոր արժատներ էին ձգել հայ բժշկագի-
տության մեջ, որ հնարավոր է եղել բժշկական աշխատություն-
ներ գրել արարական տերմիններով, առանց նրանց բացատրու-
թյունը տալու: Բառք Գաղիանոսի մեջ 30-ի շափ հունական բա-
ռերի տված արարական բացատրությունը վկայում է այն մա-
սին, որ արարական բառերը յուրացըել էին ոչ միայն բժշկական
նեղ շրջանում, այլ նրանք ընդհանրացել էին ժողովրդի լայն
խավերի մեջ: Միաժամանակ Բառք Գաղիանոսի-ի մեջ եղած
սակավաթիվ արարական բառերը վկայում են, որ դրանցից շա-
տերը համեմատարար նոր փոխառություններ էին և դեռևս չէին
ժողովրդականացել:

Բառք Գաղիանոսի-ն հիմք է տալիս մեզ կարծելու, որ հույն
բժշկական տերմինները հայերի մեջ տառաղարձված են եղել

հայերեն գրերով: Բերենք մի օրինակ. բառարանի մեջ կա ակիտաս բառը և բացարձած է՝ մանր ճիճի, Այդ իմաստով հունարեն բառ չկա: Ավելի հավանական է կարծել, որ դա շահուած բան է, որն ունի նաև մանր ճիճի իմաստը: Եթե բառը հունարեն զրված լիներ, ապա հայ հեղինակը երբեք չէր կարող շահուածը շփոթել ակիտաս-ի հետ: Մնամ է միայն ենթադրել, որ այդ զրված է եղել հայերեն տառերով՝ Սկիտաս, իսկ «Յառք»-ի հեղինակը, որ այնքան էլ հմուտ չէր հունարենում, հայերեն երկաթադիր «Ա» տառն ընդունել է «Ա»-ի տեղ և այդպիսով Սկիտաս-ը զարձել է Ակիտաս: Նման թյուրիմացություն տեղի է ունեցել նաև Խպօմիկիտոն բառի հետ: Հունարեն սոստատու որ նշանակում է մանր ճիճի: Պարզ է, որ հայերեն զրված է եղել Խպօմիկիտոս, որ ժամանակի ընթացքում բառի միջին ռա տառը ընդունվել է «մի» զրի տեղ և զրանից առաջ է եկել զոյություն չունեցող Խպօմիկիտոն բառը: Նման դեպքեր հաճախ են հանդիպում Բառք Գաղիանոսի մեջ: Դրանք ցույց են տալիս, որ Բառք Գաղիանոսի-ի օտար բառերը հեղինակը քաղել է հայերեն զրած աշխատություններից:

Հայ հին զրականության մեջ երբեմն հանդիպում են հունարեն բառեր հայերեն տառադարձությամբ, օրինակ Ս. Գրքում մանրագոր, կինամոն, կասիա, նարդոս և այլն: Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան» մեջ, ակոնիտովն, կոնիոմին, կարկինոս և այն, ապա Մ. Խորենացու մոտ ելեփանդական, պատագրոս, Անանիա Շիրակացու մոտ տօբոս և բօնոս:

Հ. Տաշյանի կարծիքով՝ հայերի մեջ ընդունված է եղել օտար բառերը հայերեն տառերով զրել Եղիպատում գտնված մի պապիրուսի պատառիկի վրա հայերեն տառերով զրված էին հունարեն բառեր: Այսպիս, եթե հայերը, անգամ օտարության մեջ՝ շրջապատված հույներով, հունական բառերը զրել են հայերեն տառերով, ապա առավել ևս այդ սովորությունը պետք է կիրառած լինեին իրենց հայրենիքում: Եթե այդ բառերը հայերեն տառերով են զրված եղել, ապա կասկածից դուրս է, որ դրանք առկա են եղել մի աշխատության մեջ, որ մեզ չի հասեր: Այդպիսի զրականության եղակի փաստաթուղթ հանդիսացող Բառք Գաղիանոսին կարող է մեզ որոշ չափով օգնել, պարզելու, թե ինչ տիպի աշխատություն է եղել սկզբնագիրը:

«Յառք»-ի մեջ մեծ քանակությամբ տեղ գտած բուժիչ բույսերի անուններից շատերը հանդիպում են Գիոսկորիդի աշխա-

տությունների մեջ։ Սակայն, «Բառքի» ախտաբանական և անառառմիական տերմինները և այն հանգամանքը, որ այդ հուշարձանը կոչվում է Բառք Գաղիանոսի, թույլ են տալիս մեզ ենթադրելու, որ զրանք քաղված են Գաղիանոսի ինչ որ մեզ անհայտ աշխատությունից։ Այսպես թե այնպես Բառք Գաղիանոսի հունարեն բառերը պետք է մանրամասն համեմատել Գաղիանոսի և մասամբ Դիոսկորիդի աշխատություններում առկա բառերի հետ։ Նման ուսումնասիրությունն առավել ևս անհրաժեշտ է, քանի որ Բառք Գաղիանոսին մինչև այժմ լրիվ ու լուրջ ուսումնասիրության՝ չի ենթարկվել։

Այսովելով մեր ասածները՝ զալիս ենք հետեւյալ եզրակացության։

1. Բառք Գաղիանոսին մեզ հասած ամենահին բժշկական բառարանն է, որի ամենահին օրինակը զրված է եղել 10-րդ դարի վերջերին կամ 11-րդ դարի առաջին քսանամյակում։

2. Բառք Գաղիանոսին և Գաղիկ Հեթումյան Բժշկարանը մեզ լրիվ պատկեր են տալիս բժշկության զրության մասին հայաստանում, այն ժամանակաշրջանում, երբ մոռացության էին տրվում հունական տերմինները և, ընդհակառակը, տարածվում էին արաբականները։

Х. А. МЕЛИК-ПАРСАДАНЯН

КРАТКИЕ СВЕДЕНИЯ О ДРЕВНЕЙШЕМ АРМЯНСКОМ МЕДИЦИНСКОМ СЛОВАРЕ

В Матенадаране (Гос. центр. хранилище рукописей Арм. ССР) хранится более 30-ти рукописей, в которых содержится медицинский словарь под заглавием «Словарь Галена».

Первый столбец словаря занимают слова иностранного происхождения, написанные армянскими буквами. Большая часть этих слов греческого происхождения. На втором столбце словаря даны переводы этих слов и терминов на армянском языке.

Все эти рукописи относятся к XIV—XVIII в.в., когда греческие слова и термины стали редко употребляться в армянской литературе. Отсюда можно сделать вывод, что этот «Словарь Галена» был составлен гораздо раньше, а именно в

ту эпоху, когда среди армян, в частности в научной литературе, греческие медицинские термины применялись широко. Это наше предположение находит веское подтверждение в том, что у мхитаристов в Венеции хранится рукописный лечебник XIII века, по памятной записи которого видно, что он является списком рукописи конца X или начала XI века. В XXXV главе этого лечебника помещен «Словарь Галена». Этот последний является самостоятельным трудом и лишь механически приобщен к «Лечебнику», быть может, только лишь ввиду медицинского содержания его.

В «Словаре Галена» приведено более 400 слов греческого происхождения. Около 80 слов весьма искаженных и трудно поддающихся этимологизации и приблизительно 80 арабских слов. Почти все иностранные слова имеют толкования на армянском языке. Последнее обстоятельство лишний раз доказывает, что в X и XI в.в. медицинские термины армянского происхождения чаще применялись в армянской литературе, чем иностранные.

В X веке арабские медицинские термины были распространены по всем странам Передней Азии. Они проникли и в армянскую литературу.

Греческие медицинские термины применялись армянами наряду с армянскими еще задолго до распространения арабских терминов. С проникновением в армянскую медицинскую литературу арабских медицинских терминов, греческие термины постепенно вытеснялись из армянской лексики, употреблялись реже и нуждались в толковании. Вероятно, в эту эпоху неизвестный автор словаря собрал имеющиеся в более старой медицинской литературе все малопонятные слова и термины и перевел их на армянский язык.

Весьма возможно, что греческие термины были доступны лишь узкому кругу врачей. Знакомство с этими терминами облегчало армянам-врачам пользование греческой литературой.

Греческие медицинские слова и термины проникли в армянскую лексику с V века и применялись параллельно с армянскими до X—XI в.в.

С распространением арабских терминов среди армян, греческие постепенно предаются забвению. Повидимому автор-

«Словаря» недостаточно владел греческим языком, и потому у него нередко встречаются неточные переводы терминов.

«Словарь Галена»—по сей день полностью не опубликован и не изучен. Ввиду значения его для истории армянской медицины, необходимо подготовить текст этого интересного памятника и подвергнуть его всестороннему изучению.

Выводы:

1. «Словарь Галена» является древнейшим, дошедшем до нас медицинским словарем у армян и относится к X или началу XI в.
2. «Словарь Галена» относится ко времени, когда арабские термины стали вытеснять греческие из армянской лексики.